ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12. 1954 Общественные науки

Մ. Արզումանյան

# ԱՍՔԱՆԱԶ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1905—1917 ԹԹ.

*Կոմունիստական պարտիայի աննկուն մարտիկ, անվեհեր ռևոլյուցիոներ Ա. Մովսիսյանը անցել է պայքարի երկարատև ու փառապանծ ուղի։ Նա իր ողջ գիտակցական կյանքը, եռանդն ու ընդունակությունները նվիրել է աշխատավոր մարդկության ազատագրման ու բարեկեցության մեծ գործին։*

*Ա. Մովսիսյանը վենինյան կոփվածքի պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ էր. 1905 թվականին մանելով Կոմունիստական պարտիայի շարքերը, նա մինչև վերջը հավատարիմ մնաց ռևոլյուցիայի գործին։ Ցարիզմի դժնդակ պայմաններում Մովսիսյանը ծավալեց ռևոլյուցիոն բեղմնավոր գործունեություն։ Նրա պարտիական-քաղաքական կազմակերպչական աշխատանքը զուգակցվում էր ժուռնալիստական-թեորիական գործունեության հետ։*

*Ա. Մովսիսյանը ակտիվորեն մասնակցել է Սովետական իշխանության համար մղվող պայքարին և ապա դարձել Սովետական Հայաստանի ճանաչված պետական գործիչներից մեկը։ Մեծ են նրա ծառայությունները ռևսպուբլիկայի սոցիալիստական շինարարության ծավալման գործում, հատկապես կուլտուրական ֆրոնտում։*

*Ասքանազ Մովսիսյանի կյանքի ու ռևոլյուցիոն հասարակական գործունեության ուսումնասիրությունը ունի ոչ միայն գիտական-պատմական, այլև քաղաքական-պատմագիտական նշանակություն։ Մեր այս հոդվածը նվիրված է Մովսիսյանի գործունեության առաջին շրջանին՝ սկսած 1905 թվականից մինչև 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան։*

*Ասքանազ Հարությունի Մովսիսյանը ծնվել է 1885 թվականի դեկտեմբերի 20-ին (նոր տոմարով 1886 թ. հունվարի 2-ին) Ազբերդի Գանձակ (այժմ Կիրովաբաղ) քաղաքում, չքավորի ընտանիքում։ Նրա հայրը զբաղվել է դերձակությամբ և ուսուցչությամբ, իսկ ավելի ուշ՝ քահանայությամբ։*

*Պատանի Ասքանազն սկզբնական կրթությունն ստացել է տեղի ծխական, ապա քաղաքային դպրոցում։ Միջնակարգ կրթություն ստանալու համար 1903 թվականին նա մտնում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Նա իր ընկերների հետ միասին կազմակերպում է աշակերտական գաղտնի՝ ուղղված ճեմարանի դաժան ռեժիմի դեմ։ Դրա համար 1905 թ. սեպտեմբերին կաթողիկոսական հատուկ կոնդակով հեռացվում է ճեմարանից։ Այնուհետև՝ Մովսիսյանը մտնում է Երևանի թեմական դպրոցը, որտեղ նույնպես մասնակցում է աշակերտական ելույթներին և հեռացվում դպրոցից, բայց նրան հաջողվում է նորից ընդունվել և ավարտել 1906 թվականին։*

Մռավյանը վաղ հրջանից ցուցաբերում է հետաքրքրություն գեպի հասարակական կյանքը։

Մանրությունը մարքսիստական գրականության հետ և ապա ռուսական առաջին ռևոլյուցիան իրենց խորը կնիքն են դնում Մռավյանի ռևոլյուցիոն աշխարհայացքի կազմավորման վրա. նա 1905 թ. ապրիլին մտնում է Գանձակի բոլշևիկյան կազմակերպության մեջ։ Դրանով էլ մեկընդմիշտ կանխորոշվում է նրա կյանքի ու գործունեության ուղին. նա իր կյանքը նվիրում է պրոլետարիատի ազատագրության մեծ գործին։

Մռավյանն աճում ու դաստիարակվում էր ռուսական ռևոլյուցիոն շարժման մթնոլորտում, մարքսիզմ-լենինիզմի թեորիայի հզոր լույսի տակ։ «Ընկ. Լենինի անունը,—գրել է հետագայում Մռավյանը,—լսել եմ դեռևս 1904 թվականին և չգիտեմ մեկ ուրիշ մարդ, որին անձամբ տեսնելու ցանկությունն իմ մեջ այնքան ուժեղ լիներ, որքան այդ ունեի երկար տարիների ընթացքում Վլադիմիր Իլյիչի նկատմամբ»[1]։ Ճիշտ է, պրոլետարական ռևոլյուցիայի հանճարին Մռավյանն անձնապես տեսավ բավական ուշ՝ 1920 թվականին, բայց այդ ամբողջ ժամանակաշրջանում նա զինվորագրված էր մեծ Լենինի բանակին, հետևում էր նրա դաղափարներին և կենսագործում այդ դաղափարները։

Իր ռևոլյուցիոն գործունեությունն սկսելով Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների շարքերում, Մռավյանն անմիջականորեն գործել է մեծ Լենինի աշակերտներ ու զինակիցներ Ի. Վ. Ստալինի և Ս. Շահումյանի ղեկավարությամբ։ Նա աշխատել է պարտիայի ականավոր գործիչներ Ս. Սպանդարյանի, Պ. Ջափարիձեի, Ս. Օրջոնիկիձեի, Մ. Ազիզբեկովի, Ա. Միկոյանի և ուրիշների հետ միասին։ Նրա ռևոլյուցիոն կոփվածքի ձևավորման վրա բարերար ազդեցություն է ունեցել նաև հայ անվանի բանվոր-ռևոլյուցիոներ Մելիք Մելիքյանը («Դեդուշկան»), որին նա անվանել է «կոմունիզմի քարոզիչ» և իր «առաջին բոլշևիկ ուսուցիչը»։ Մռավյանը պարտիայի շարքերն է ընդունվել Գանձակի բոլշևիկյան կազմակերպության մեջ, ուր Դեդուշկան ղեկավար մասնակցություն ուներ և աչքի էր ընկնում պարտիական-քաղաքական ու ռևոլյուցիոն աշխատանքի իր փորձով, պրոլետարական անհողդողդ կամքով ու վճռականությամբ։

1905 թ. աշնանը Մռավյանը ղեկավար մասնակցություն է ունենում ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպության (բոլշևիկյան) ստեղծման գործում, որտեղ աչքի ընկնող դեր էին կատարում բանվոր Մարտիրոս Միրաքյանը (Շանթը), Տոմսկի Պոլիտեխնիկ ինստիտուտի ուսանող Ալեքսանդր Մալխասյանը և ուրիշները։ Կազմակերպության անդամները սերտ կապեր հաստատեցին Երևանի բանվորների, արհեստավորների, գործակատարների, երկաթուղայիններ, աշակերտների հետ և դլխավորեցին նրանց հակացարական ելույթները՝ ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակ։

Երևանի երկաթուղային և փոստա-հեռագրական հիմնարկների ծառայողներն ակտիվորեն մասնակցեցին Հոկտեմբերյան համառուսական գործադուլին։ 1905 թ. վերջին և 1906 թ. սկզբին տեղի ունեցավ Երևանի թեմական դպրոցի աշակերտության գասադուլը, որն աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ։ Ալեքսանդր Մալխասյանի թաղման կապակցությամբ

[1] Ընկեր Ա. Մռավյանի հոդվածների, հիշողությունների ժողովածու, Երևան, 1930, էջ 9։

նույնպես կազմակերպվում է ուժեղ ցույց և բարձրացվում կարմիր դրոշակ, 1906 թ. տեղի է ունենում մայիսմեկյան ցույց և այլն։ Այդ բոլոր ելույթներին ղեկավար մասնակցություն է ունենում Ա. Մռավյանը։

Երևանի բոլշևիկյան կազմակերպությունն անհաշտ պայքար էր մղում մենշևիկների, դաշնակցականների ու հնչակյանների դեմ, որոնք ուզում էին ձախողել ռեոլյուցիայի գործը։ Ա. Մռավյանն իր գործունեության հենց սկզբից դեմ է եղել դաշնակցությանը. «Իմ գիտակցական կյանքի հենց սկզբից,— մատնանշել է Ա. Մռավյանը,— ես բացասաբար եմ վերաբերվել դեպի դաշնակցություն պարտիան և նրա ավանտյուրիստական գործունեությունը Թյուրքահայաստանում»[1]։ Նա նույնպիսի վերաբերմունք ունեցել է և հնչակյանների նկատմամբ։ Մռավյանը այդ երկու պարտիաների միջև եղած գզվրտոցը համարել է սոսկ թայֆայական կռիվ՝ հայ ժողովրդին խարելու և ավելի դաժանորեն կեղեքելու համար։

Երևանի բոլշևիկյան կազմակերպությունը գնալով աճում ու ամրապնդվում է։ 1906 թ. դարնանը նրա անդամների թիվը հասնում է 100-ի։ Կազմակերպությունը ՌՍԴԲՊ 4-րդ («միավորիչ») համագումարի դելեգատ է ընտրում Ստ. Շահումյանին, որը համագումարից հետո, 1906 թ. մայիսի վերջերին լինում է Երևանում և զեկուցումներով հանդես գալիս բոլշևիկների խորհրդակցություններում ու բանվորների առաջ։

1906 թվականին ավարտելով Երևանի թեմական դպրոցը, Մռավյանը փոխադրվում է Դանձակ և դրսվելով ուսուցչությամբ, միաժամանակ ակտիվորեն մասնակցում է տեղական բոլշևիկյան կազմակերպության աշխատանքներին։ Նա անմիջականորեն գործում է քաղաքի բանվորության ու երիտասարդության, ինչպես նաև կայարանի երկաթուղայինների մեջ, բայց նրանց պրոպագանդում է լենինյան տակտիկական դրույթները և պայքարում դրանց կենսագործման համար։ Տեղական բոլշևիկների հետ միասին՝ նա եռանդուն աշխատանք է ծավալում քաղաքի հայ և ադրբեջանական ժողովրդական մասսաների եղբայրական կապերի ամրապնդման ուղղությամբ, անհաշտ պայքար մղելով նացիոնալիստների դեմ, որոնք հրահրում էին հայ-թաթարական ընդհարումներն ու ջարդերը՝ մասսաներին ռեոլյուցիոն պայքարից շեղելու համար։

Ա. Մռավյանը քաղաքական պրակտիկ աշխատանքի հետ միասին՝ ծավալում է նաև գրական պրոպագանդա, ակտիվորեն թղթակցում է Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի խմբագրությամբ լույս տեսնող բոլշևիկյան «Կայծ» և ապա «Նոր Խոսք» հայկական թերթերին՝ «Հրանտ» ծածկանունով։

«Նամակ Դանձակից» առաջին հոդվածում (տես «Կայծ», № 31, 1906, հունիսի 28) Մռավյանը մերկացնում է հայ-թաթարական կոտորածների հանցավորներին, խարազանում թյուրքական բեկերին ու հայ դաշնակներին, որոնք չնայած փորձում էին «զարդարվել սոցիալիզմի փեսուրներով», իրականում վարում էին բուրժուա-նացիոնալիստական, ջարդարարական քաղաքականություն։ Մռավյանը միանգամայն ճիշտ կերպով ընդգծում էր, որ հայ և ադրբեջանական աշխատավորության զարթոնքը նրանց միասնության ու բարեկամության [illegible] անպայմանորեն

[1] ՄԷԱՍՀ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. [illegible], գ. [illegible], թ. 33։

«ապագա խոստացող երևույթ է» և կործանարար՝ շահագործողների ու նրանց լակեյական պարտիաների համար։

«Նամակ Գանձակից» երկրորդ հոդվածում («Կայծ», № 43, 1906, հուլիսի 28) Մռավյանը մերկացնում է դաշնակցության հակաժողովրդական գործունեությունն ու կամայականությունները։ Դաշնակցականներն ինչպես ամենուրեք, այնպես էլ Գանձակում ունեին իրենց բանտերը, հարկեր էին գանձում բնակչությունից, կազմակերպում տեռոր, թալանում ժողովրդին։ Բոլշևիկները վճռական պայքար են մղում դաշնակցական բաշիբոզուկների դեմ և մերկացնում նրանց գաղանային էությունը։

Նույն վերնագրով տպված երրորդ հոդվածը («Նոր Խոսք», № 7, 1906, սեպտեմբերի 3) դարձյալ ուղղված է դաշնակցության դեմ։ Մռավյանը խարազանում է դաշնակցականների ազգային ոնապարծությունը, դաշնակների, որոնք Օտտոմանյան բանկի գրավման ավանտյուրիստական դեպքը համարում էին «XIX դարի ամենախոշոր հեղափոխական ակտը» և «հերոսության աննման արտահայտություն», իսկ նրա ձեռնարկողներին՝ «աստվածներ»։ Մռավյանն այդ առթիվ սուր իրոնիայով գրում է. «Գիտեինք, որ դաշնակցության խանութում ամեն բան ծախվում է, բայց մենք չգիտեինք թե աստվածներ էլ են ծախվում»։

Դաշնակցությունը դարձել էր մեծագույն չարիք հայ ժողովրդի համար և չնայած դրան՝ նրա ներկայացուցիչները «սոցիալիզմի, դեմոկրատիզմի» անվան տակ փորձում էին արդարացնել իրենց ամեն մի բռնությունն ու կամայականությունը։ Դիմակազերծ անելով այդ նենգ ու ստոր քաղաքականությունը, Մռավյանը նրանց անվանում է «պոլիցիական սոցիալիստներ», որոնց նույնիսկ կարող է «նախանձել ինքը Ստոլիպինը»։

Մռավյանը սուր քննադատության էր ենթարկում այն մարդկանց, որոնք փորձում էին դաշնակցության հակաժողովրդական քաղաքականությունը վերագրել առանձին անհատների։ Նա նշում էր, որ դաշնակցությունն ամբողջովին իր գործունեությամբ միայն աղետ էր բերում հայ ժողովրդին։ Նա գրում էր. «Պարոններ, դաշնակցության բռնությունների պատճառը մի քանի «գաճաճ» անհատները չեն, նրա այս կամ այն անդամի բարոյական դեմքը չէ, այդ մանրիկ ռեֆորմներով բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունը չի կարելի պրոլետարիատի ու չքավոր գյուղացիության դասակարգային իսկական շահերի արտահայտիչը դարձնել։ Դասակարգային պրոլետարական տեսակետի վրա կանգնելու համար, շատ հին կուռքեր պիտի խորտակել»։ Դրանցից մեկը դաշնակցության «թյուրքահայ ավանտյուրան է», որը մասսաներին հեռացնում է ռևոլյուցիոն պայքարից և հայ ժողովրդին բերում նորանոր աղետներ։ Ա. Մռավյանն ընդգծում էր այն միտքը, որ հայ ժողովրդի պայքարը պետք է կապել համառուսական ռևոլյուցիոն պայքարի հետ։

Այսպիսով, ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Մռավյանը պարտիական-քաղաքական և ռևոլյուցիոն-մասսայական աշխատանք է ծավալում։ Պատահական չէ, որ նա, չնայած 1906–1907 թթ. պաշտոնապես աշխատում էր որպես Գանձակի հայկական դպրոցի ուսուցիչ՝ ձեռք է բերում «անբարեհույսի» համբավ և 1907 թ. հունիսին մի խումբ ուսուցիչների հետ միասին հեռացվում աշխատանքից։ Այդ ուսուցիչները, սակայն, չեն ընկճվում և համառորեն շարունակում են սկսած գործը։ Գանձակի

ծխական երկսեռ դպրոցի ուսուցչական խումբը, Մռավյանի գլխավորությամբ, գրավոր բողոք է ներկայացնում, որի մեջ դատապարտվում է դպրոցի հոգաբարձության կամայականությունը և կոչ է արվում «բոլոր ընկեր ուսուցիչներին և ուսուցչուհիներին՝ բոյկոտի ենթարկել Գանձակի ծխական դպրոցի ուսուցչական տեղերը», որպեսզի հոգաբարձությունը չընտրի իրեն համար հաճելի, բայց աշակերտների համար անտանելի անձնավորություններ[1]։

* * *

1907 թվականի հուլիսին Մռավյանը փոխադրվում է Բաքու, ուր և աշխատում է մինչև 1908 թ. դեկտեմբեր ամիսը։ Այդ այն ժամանակաշրջանն էր, երբ ամբողջ երկրում մոլեգնում էր ստոլիպինյան դաժան ռեակցիան, բայց Բաքվում եռում էր ռևոլյուցիոն աշխատանքը, Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը հանդիսանում էր պարտիայի առաջավոր ու մարտական ջոկատներից մեկը։ Այնտեղ էին գործում Ի. Վ. Ստալինը, Ստ. Շահումյանը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը, Պ. Զավարիձեն, Մ. Ակիպրեկովը, Բ. Ֆիոլետովը և ուրիշները, որոնց ղեկավարությամբ աճում ու կոփվում էր ռևոլյուցիոն գործիչների մի ամբողջ սերունդ։ Այդ փայլուն պլեադայի մեջ էր նաև բոլշևիկ Ա. Մռավյանը, որը Բաքվի բազմազգ ու հերոսական պրոլետարիատի միջավայրում և Վլադիմիր Իլյիչ Լենինի զինակիցների անմիջական ղեկավարությամբ, ստացավ պրոֆեսիոնալ-ռևոլյուցիոնների իր մարտական մկրտությունը։ «Իմ կուսակցական կազմավորման տեսակետից,— գրել է հետագայում Մռավյանը,— ամենավճռական շրջանը՝ Բաքվի աշխատանքի շրջանն էր, կատարված Ստալինի, Շահումյանի, Զավարիձեի, Տիմոֆեյի ղեկավարության տակ, Բաքվի պրոլետարիատի մեջ։ Բաքուն իմ բոլշևիկյան հայրենիքն է»։

Այստեղ Մռավյանն աշխատում է արդեն որպես պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ և հմտորեն կիրառում անլեգալ ու լեգալ աշխատանքի զուգակցման լենինյան տակտիկան։ Նա Բաքվի բոլշևիկյան կազմակերպության հանձնարարությամբ ագիտացիոն պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանք է ծավալում Իալախանիի բանվորական կազարմաներում։ Այստեղ էլ վճռական պայքար է մղում դաշնակցականների, սպեցիֆիկների ու ամեն կարգի բուրժուական նացիոնալիստների դեմ՝ հանուն բանվորների ինտերնացիոնալ դաստիարակության ու համերաշխության։ Նա իր ամբողջ ժամանակն անց է կացնում բանվորների մեջ, կլանված՝ պարտիական-քաղաքական աշխատանքով։ Հիշելով Մռավյանի այդ ժամանակաշրջանի գործունեության մասին, հին բոլշևիկ ընկ. Ս. Մարտիկյանը գրում է. «Դա այն սակավաթիվ հայ բոլշևիկ ինտելիգենտ ընկերներից մեկն էր, որոնք որպես պրոֆեսիոնալ բոլշևիկներ միայն ապրում էին կուսակցական կյանքով և ապրելու նպատակը գտնում էին միայն կուսակցական աշխատանքի մեջ»։

1907 թվականի աշնանը Մռավյանը Բաքվում և ապա Գանձակում

---

1 ՄԷԼՍԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 10, գ. 57, թ. 1։
2 Նույն տեղում, գ. 390, թ. 13—14։
3 «Խորհրդային Հայաստան», 1929, հոկտեմբերի 26։

ակտիվ մասնակցություն ցույց տվեց 3-րդ Պետական դումայի բոլշևիկյան նախընտրական կամպանիային։

Մռավյանն իր ռևոլյուցիոն աշխատանքի համար ենթարկվում է ոստիկանական հետապնդումների, որոնցից խուսափելու, ինչպես նաև քայքայված առողջությունը վերականգնելու համար 1908 թ. դեկտեմբերին Բաքվի բոլշևիկյան կոմիտեի գիտությամբ միաժամանակ մեկնում է գյուղ և զբաղվում ուսուցչությամբ։ Այստեղ էլ նա ռևոլյուցիոն ագիտացիա է ծավալում գյուղացիների ու աշակերտների մեջ։ Ա. Մռավյանի համար նոր հորիզոններ են բացվում, երբ նա 1909 թ. ամռանը մեկնում է Պետերբուրգ՝ բարձրագույն կրթություն ստանալու։ Երկրի մայրաքաղաքը՝ Ռուսաստանի ամենախոշոր քաղաքական ու կուլտուրական կենտրոնը, ռևոլյուցիոն-պարտիական աշխատանքի այդ կենտրոնը դառնում է Մռավյանի ռևոլյուցիոն գործունեության մեծագույն դարբնոցը, նրա երկրորդ մարտական մկրտության օջախը, որտեղ նա իր պարտիական-ռևոլյուցիոն աշխատանքը զուգակցում է մարքսիզմի թեորիայի խորը յուրացման հետ։

Մռավյանը մտնում է Պսիխոնևրոլոգիական ինստիտուտը և ստանում պատմա-մանկավարժական կրթություն։ Իր պաշտոնական ուսուցման հետ մեկտեղ նա կլանված ուսումնասիրում է մարքսիստական գրականությունը, հատկապես Վ. Ի. Լենինի երկերը։

Նա միաժամանակ շարունակում է ռևոլյուցիոն աշխատանքը, մտնում ուսանողական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ և կազմակերպում բոլշևիկյան ֆրակցիա։ Նա կատարում է Պետերբուրգի բոլշևիկյան կազմակերպության մի շարք հանձնարարություններ և պրոպագանդիստական աշխատանք տանում քաղաքի բանվորների մեջ։

Մռավյանը ողջունում է Պրագայի կոնֆերենցիայի որոշումները և շարունակում անհաշտ պայքարը մենշևիկ-լիկվիդատորների դեմ։

Ա. Մռավյանի ռևոլյուցիոն աշխատանքը նոր թափ է ստանում բանվորական շարժման վերելքի տարիներին։ Գտնվելով Պետերբուրգում, նա անմիջականորեն կապվում է բոլշևիկյան «Պրավդա»-ի հետ և աշխատակցում նրան։ «Պրավդա»-ին շատ մոտ էր կանգնած նաև անվանի բոլշևիկ, խորապես պատրաստված Սուրեն Հովսեփյանը, որի հետ Մռավյանն աշխատել էր դեռ Գանձակի բոլշևիկյան կազմակերպության մեջ։ Ս. Հովսեփյանը բոլշևիկյան մամուլում („Правда“, “Просвещение“, „Невская звезда“ և այլն) հանդես է գալիս ամենատարբեր թեմաների շուրջը և հատկապես գրում փիլիսոփայական հարցերի մասին, իսկ Ա. Մռավյանը՝ գլխավորապես կովկասյան իրականության մասին։

1913 թ. հոկտեմբերի 23-ին „За правду“ թերթի 22-րդ համարում լույս է տեսնում Կովկասի մի խումբ մարքսիստների բողոք-դիմումը, որ կազմել էին Ս. Հովսեփյանը և Ա. Մռավյանը։ Կովկասյան մարքսիստները երկրամասի պրոլետարիատի ու ողջ աշխատավորության անունից, ջերմորեն պաշտպանելով 4-րդ Պետական դումայի բոլշևիկյան ֆրակցիային, մեղադրում ու մերկացնում են մենշևիկյան «յոթնյակին» և հատկապես կովկասյան դեպուտատներ Չխեիձեին, Չխենկելուն ու Սկորեպին, որոնք դավաճանել էին պրոլետարիատի գործին և մերժելով ազգերի ինքնորոշման իրավունքի բոլշևիկյան ծրագիրը, Պետական դումայի տրիբունայից հոչակել էին կուլտուր-ազգային ավտոնոմիայի բուրժուա-նացիոնալիստական

պահանջը։ Կովկասյան մարքսիստներն իրենց մերկացնող բոլորի մեջ կատարում են սպանիչ հարցապնդում. «Ինչ հիման վրա է դեկլարացիայի մեջ մտցվել կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը։ Դուք... ստացել էք արդյոք Կովկասյան բանվորական կազմակերպությունների նակազը առաջարկելու ոչ-մարքսիստների ծրագրից վերցված այդ պահանջը»։ «Պրավդա»-ն ընդգծում է, որ Կովկասյան պատգամավորների վարքագծի մեջ ցայտուն կերպով դրսևորվել է վրացական ազգայնական ինտելիգենցիայի, հայկական դաշնակցության նեղ ու թթու նացիոնալիզմը։ Այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև նրանք իրենց քվեներով օգնեցին մենշևիկներին դառնալու, այսպես կոչված, «ժողովրդի ընտրյալներ»։

«Պրավդա»-ն գրում է. «Կոչ ենք անում Ձեզ, ընկեր Կովկասյան բանվորներ, հետևել Պետերբուրգի պրոլետարիատի օրինակին և Ձեր վճռական խոսքն ասել սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի յուր լիկվիդատորական անդամների առթիվ, ասել որ դուք թույլ չենք տա անպատասխանատու ձևով ոտնակոխ անելու մեր հին մարտական ծրագիրը, որի համար մղվող պայքարը այնքան շատ զոհեր է նաև ձեզ վրա»։

Անդրկովկասի պրոլետարիատը պատվով կատարեց «Պրավդա»-ի ցուցումը և համընթաց քայլեց ռուսական պրոլետարիատի հետ։

Ա. Սռավյանի երկրորդ հոդվածը՝ Ա. Նազարյան ստորագրությամբ, տպագրվում է 1914 թ. փետրվարի 6-ին „Путь правды" թերթի 14-րդ համարում՝ «Բանվորական ժուռնալներ» բաժնում։ Հոդված-հաղորդագրությունը նվիրված է 1914 թ. հունվարին Թիֆլիսում հայերեն լեզվով լույս տեսած «Մեր Խոսքը» մարքսիստական շաբաթաթերթին, որին աշխատակցել են Ստ. Շահումյանը և ուրիշները։ Այնտեղ մատնանշվում է, որ Թիֆլիսում լույս է տեսել մարքսիստական ուղղության հայկական ժուռնալի 1-ին համարը և որը կազմված է հետաքրքիր ու բազմակողմանիորեն։ Խոշոր նշանակություն էր տրվում Ստ. Շահումյանի «Երրորդ Պետական դուման» հոդվածին, որը վերլուծում էր դումայում ստեղծված ճգնաժամը, բացահայտում կադետների քարոզած «կոնստիտուցիոն պատրանքների» և լիկվիդատորների «լեգալիզմի» խորտակման արմատական պատճառները։

Մռավյանը «Պրավդա»-ում հանկես է գալիս նաև հաղորդագրություններով՝ Կովկասի բանվորական շարժման մասին։

Աշխատանքը Պետերբուրգում և անմիջական կապը «Պրավդա»-ի, հետ Մռավյանի համար ունեցավ խոշոր նշանակություն։ Նա իրեն դրսևորեց՝ որպես իսկական պրավդիստ-բոլշևիկ և հետևողականորեն պայքարեց մեր պարտիայի ծրագրային պահանջների կենսագործման համար։

* * *

1913 թ. հունիսին Պետերբուրգում ավարտելով բարձրագույն դպրոցը, Մռավյանը վերադառնում է Անդրկովկաս և հաստատվում Թիֆլիսում, բայց նահանգապետը հրաժարվում է նրան ուսուցչական պաշտոնի նշանակել և երկար ամիսներ անգործ թափառելուց հետո քաղաքային ուպրավայում մի չնչին պաշտոն է ստանում։ Հետո հաջողվում է անցնել ուսուցչության։

Իմպերիալիստական պատերազմի տարիներին ծանր պայմաններ ստեղծվեցին ռևոլյուցիոն աշխատանքի համար։ Ամեն ինչ կասկածի տակ էր առնվում, ռևոլյուցիայի համար պայքարող մարդիկ պատժվում էին պատե-

բազմական ժամանակաշրջանի արտակարգ օրենքներով։ Բայց բոլշևիկները հաղթահարեցին բոլոր դժվարությունները և շարունակեցին իրենց անխոնջ աշխատանքը։ Դրանց մեջ էր նաև Ա. Մռավյանը։

Անդրկովկասի բոլշևիկների աշխատանքն անմիջականորեն գլխավորում էր Վ. Ի. Լենինի գինակից Ստ. Շահումյանը։ 1915 թ. հոկտեմբերին Բաքվում տեղի ունեցավ Անդրկովկասի բոլշևիկների կոնֆերենցիան, որը իր որոշումների հիմքում դրեց պատերազմի վերաբերյալ լենինյան թեզիսներն ու պարտիայի մանիֆեստը։ Ցուցում տրվեց Կովկասի բոլշևիկներին՝ ծավալել հակապատերազմական լայն ագիտացիա ու պրոպագանդա և տեղական ժողովուրդներին կազմակերպել ռևոլյուցիոն պայքարի՝ ընդդեմ ցարիզմի։

Կովկասի բոլշևիկները՝ պայքարելով լենինյան ցուցումների և կոնֆերենցիայի որոշումների կենսագործման համար, կարևոր նշանակություն են տալիս նաև գրավոր պրոպագանդային։ Մի խումբ հայ բոլշևիկների ջանքերով 1915 թ. դեկտեմբերին Թիֆլիսում սկսում է լույս տեսնել «Պայքար» սոցիալ-դեմոկրատական շաբաթաթերթը։ Ճիշտ է նրան մասնակցում էին նաև մենշևիկ-ինտերնացիոնալիստները, բայց թերթը հիմնականում գտնվում էր բոլշևիկների ձեռքին, որոնք և ապահովեցին նրա դեմոկրատական-հակապատերազմական ուղղությունը։ Թերթի բոլշևիկ խմբագիրներն էին Ա. Մռավյանը և Ս. Ռանոյանը։ Նրան աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Արսեն Ամիրյանը, Ա. Միկոյանը, Մելիք Մելիքյանը («Դեղուշկան»), Հակոբ Հակոբյանը, Արտաշես Կարինյանը, Հակոբ Կամարին և ուրիշները։ Չնայած թերթը լույս էր տեսնում լեգալ ձևով և սիստեմատիկաբար ենթարկվում հալածանքների. ցարական դաժան ցենզուրան բազմաթիվ հոդվածներ արգելում էր կամ կրճատում, այնուամենայնիվ, նա հմտորեն անց էր կացնում բոլշևիկների քաղաքական գիծը։ Ահա թե ինչու թերթը ստանում էր բանվորների ու գյուղացիների լայն աջակցությունը։

Հետագայում, 1917 թվականին Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս տեսնող բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» թերթը բարձր գնահատելով «Պայքար»-ի կատարած դերը, գրել է.

«Հրապարակ գալով Ագամա մութին, «Պայքարը» եղավ այն կանթեղը, որ լուսո շող ձգեց հայկական համատարած խավարի մեջ։

Հայ բանվորությունը և բոլոր նրանք, որ շնչել են բանվորական օդով, չեն կարող մոռանալ այն բացառիկ պատմական դերը, որ կատարել է «Պայքարը» կովկասյան իրականության մեջ»։

Ա. Մռավյանի խմբագրությամբ լույս տեսնող «Պայքար» թերթի գործունեության ասպարեզը բավական մեծ էր ու բազմազան։ Նրա էջերում տպագրվող հոդվածները վերաբերում էին քաղաքական կյանքի կենսական հարցերին, մասսաների տնտեսական դրությանը, կուլտուրայի ու գիտության խնդիրներին և այլն։ Բայց այդ բոլորը հետապնդում էին մի նպատակ՝ մասսաներին դաստիարակել ռևոլյուցիոն պայքարի ոգով և նրանց մղել ակտիվ պայքարի։

Բնականաբար թերթի էջերում քննարկվող կենտրոնական հարցը եղել է վերաբերմունքը դեպի պատերազմը և ժողովրդական մասսաների խնդիր-

«Սոցիալ-դեմոկրատ», № 3, 1917, մայիսի 14։

ները։ Թերթը, մեծալով հանդերձ լեգալ շրջանակներում, մեծագույն ճկունությամբ ու հմտությամբ մերկացրել է պատերազմի իմպերիալիստական բնույթը և մասսաներին մղել ռևոլյուցիոն պայքարի։ Թերթի բազմաթիվ անստորագիր առաջնորդող հոդվածներ, որոնց մի մասը գրել է Մռավյանը, լենինյան դիրքերից գնահատում էին իմպերիալիստական պատերազմը և կոչ անում այն վերածել քաղաքացիական պատերազմի։

«Պայքար» թերթը մերկացնում էր 2-րդ ինտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատական պարտիաներին, այդ թվում ռուսական մենշևիկներին, որոնք հանդես էին գալիս բուրժուական, ցարական «Հայրենիքի» պաշտպանությամբ։ Ա. Մռավյանը «Գերմանական սոց.-դեմ. կուսակցական կոնֆերենցիան» հոդվածում («Պայքար», № 41, 1916, հոկտեմբերի 9) դատապարտում է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեծամասնության պատերազմական տակտիկան և մեծագույն համակրանքով է խոսում սպարտակյանների (Ռ. Լյուքսեմբուրգ, Կ. Լիբկնեխտ, Ֆ. Մերինգ և այլն) մասին։

Մի այլ հոդվածում՝ «Էդուարդ Բեռնշտեյնը պատերազմի մասին», («Պայքար», № 1, 1916 հունվարի 3) Մռավյանը, մերկացնելով միջազգային օպորտունիզմը, նրա պարագլուխ Բեռնշտեյնին անվանում է «քողարկված գայլ», «զոոլոգիական փիլիսոփայության ներկայացուցիչ», որը քարոզում էր գերմանական իմպերիալիզմի համաշխարհային տիրապետություն։ Մռավյանը ցույց է տալիս, որ օպորտունիզմը ժանտախտից էլ վատթար հիվանդություն է և նրա դեմ պետք է անողոքաբար պայքարել։

Որպես «Պայքար»-ի խմբագիր Մռավյանը դրսևորում է զարգացած ու բազմակողմանի ժուռնալիստի իր ընդունակությունները։ Նա գրում է ամենաբազմազան թեմաների շուրջը և հանդես գալիս «Ազման», «Աս.», «Ա. Մանսուրյան», «Ա. Նազարյան», «Մ.», «ՄԿ», «Մ. Մակարյան», «Ռ.», «Ա. Մ.» մականուններով։

Մռավյանը վճռական պայքար է մղում հատկապես բուրժուական նացիոնալիզմի դեմ։ Նա ցույց է տալիս, որ նացիոնալիզմի թունոտ զենքի օգնությամբ բոլոր երկրների իմպերիալիստները և ռուսական ցարիզմը հրահրել են թալանչիական պատերազմ և ժողովուրդներին նետել մարդկային սպանդանոց։ Նա դիմակազերծ է անում հայկական բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ու հոսանքների հակաժողովրդական էությունը։ Դաշնակցականները, «սպեցիֆիկները», հնչակյանները և ամեն կարգի բուրժուական նացիոնալիստները հանդես էին գալիս որպես օտարերկրյա իմպերիալիստական պետությունների և ռուսական ցարիզմի գործակալներ և ամեն կերպ աջակցում հայ ժողովրդի կեղեքմանն ու բնաջնջմանը։ Նրանք գովերգելով Անտանտի կողմից մղվող իմպերիալիստական պատերազմը, երազում էին օտարերկրյա պետությունների հովանավորությամբ ստեղծել, այսպես կոչված, «ծովից ծով հայկական թագավորություն»։ Ավելին, նրանք իրենց համախոհներից կազմակերպեցին «հայ կամավորական ջոկատներ», որոնք իբր թե պետք է «ազատագրեին արևմտահայերին»։ Ստացվեց բոլորովին հակառակը. ահավոր պատերազմի անհագուրդ երախն ընկավ հայ ժողովրդի մի զգալի հատվածը և բնաջնջվեց։

Մռավյանը դեռ այն ժամանակ մերկացնում էր դաշնակցականների արյունախում, ժողովրդասպան քաղաքականությունը և ցույց տալիս, որ պետք է անողոքաբար պայքարել աշխատավոր մասսաների այդ դահիճների

գեմ։ «Հայկական համագումարը Պետրոգրադում» հոդվածում, որը տպագրվել է դրաքննական կրճատումներով, Մռավյանը բացահայտում է դաշնակցականների կործանարար քաղաքականությունը, որը նպաստեց արևմտահայերի բնաջնջմանը։ Մռավյանը կոչ է անում հայ բանվորներին ու գյուղացիներին՝ լինել «զգաստ ու ապաստրջ», հրաժարվել «ազանգականց, բայց «ցնորամիտ խնամակալներից»։ Որքան շատ պատրանքներ, այնքան շատ անակնկալներ։ Պետք է ժողովուրդն իր բախտը վերցնի իր ձեռքը և դուրս գա ակտիվ պայքարի, ամենուրեք բարձրացնի իր վճռական ու անհողդողդ ձայնը։

1916 թ. մայիսին Պետրոգրադում տեղի ունեցած համագումարի առթիվ գրած իր երկրորդ հոդվածում Մռավյանը մերկացնում է հայ կազմակերպությունների և հատկապես «Մշակ»-ի խմբագիր Հ. Առաքելյանին, որը հայ գաղթականության «օգնության համար փարիսեցիաբար պիտում էր հայ վաճառականներին. «Իսկ մենք,— գրում է Մռավյանը,— չենք հավատում «հայ վաճառականների հայրենասիրությանը», ինչպես նաև «Ռուսաստանի մի քանի քաղաքներից» վաճառականների բարեգործությանը։ Չենք կարծում, որ հայ վաճառականների «հայրենասիրությանն» թույլ ճաշակած և այժմ էլ խմող հայ գյուղացիները «Մշակ»-ի խմբագրի նման հավատան, որ վաճառականները քիչ առկոսով կրավականանան։ Ճիշտ է, այդ վաճառականները բավական ոգորված են վերի «Մշակը» և նրան փող են տալիս առանց վերադարձի, բայց... թող չխաբվեն գյուղացիները»[1]։

«Հայկական համագումարի առթիվ» երրորդ հոդվածում («Պայքար», № 7, 1917, փետրվարի 19) Մռավյանը մերկացնում է հայ գաղթականության օգնության պատրվակի տակ 1917 թ. մարտի 12-ին Երևանում գումարվելիք համագումարի նախաձեռնողներին, մշակականներին, որոնք մտածում էին միայն իրենց շահերի մասին։

Մռավյանն ամեն առիթ օգտագործել է մերկացնելու դաշնակցականների հակաժողովրդական գործելակերպը, նրանց իդեոլոգների հայացքները։ «Ա. Անարոնյանի պատասխանությունը» հոդվածում սուր քննադատության է ենթարկում դաշնակցական այդ գրողի տեսական մարգանքները։ Անարոնյանը հանդես է գալիս,— ինչպես նշում է Մռավյանը — «շողշողուն բառերով», «սիմվոլիկ ֆրազներով», հայոց ազգին վերագրում է «ասիական նախախնամության ընտրյալ հատկանիշներ» և պահանջում «արյուն հանուն նրա գեղեցկության ու վսեմության»։ Մռավյանը, անարգանքի նյութին դամելով դաշնակցական ճոռոմախոս «թեորետիկ» Անարոնյանին, գրում էր. «Արյուն, շատ արյուն» ինքնասպան սկզբունքը դարձնել քաղաքական պրակտիկայի սկզբունք — այդ անպատասխանատու ռոմանտիզմի հերկուլեսյան սյուներն են արդեն, որին հասան մեր ռոմանտիկ-թեմականցիները և որի «գեղեցկության» դրվագը արտասանեց պ. Անարոնյանը»[2]։

«Միլյուկովը և Վարանդյանը» հոդվածում, որը տպագրված է նույնպես դրաքննական կրճատումներով, Մռավյանը մերկացնում է դաշնակցության լիկը, ավանտյուրիստ Մ. Վարանդյանին, որը օգտագործելով բուրժուա-կադետ Միլյուկովի կեղծ «հայասիրական» մի քանի ֆրազները, փոր-

---

[1] «Պայքար», № 11, 1916, հոկտեմբերի 30։

[2] «Պայքար», № 20, 1916, մայիսի 16։

ձում էր պատրանքներ ստեղծել Հայաստանի ավտոնոմիայի մասին, հայ աշխատավորությանը կոչել համառուսական ռևոլյուցիոն պայքարից։

Մաավյանը նշավակում է Միլյուկովին որպես մոլի իմպերիալիստի, որը վարում էր ոչ թե հայասիրական, այլ հայակեր քաղաքականություն։

Մաավյանը կոչ էր անում ժողովրդական մասսաներին՝ միասնական ռևոլյուցիոն ճակատով պայքարել ցարիզմի ու կապիտալիզմի դեմ, հասնել ազատության ու երջանիկ ապագայի։

Պրոլետարիատի ու աշխատավոր մասսաների շահերի միակ պաշտպանները բոլշևիկներն էին, որոնք ցարիզմի դաժան հալածանքների պայմաններում շարունակում էին հաստատակամորեն առաջ տանել ռևոլյուցիայի գործը։ «Ֆրոնտովայրում» հոդվածում («Պայքար», № 19, 1916, մայիսի 8) Մաավյանը նկարագրում է Նարիմի երկրամասի աքսորականների ծանր վիճակը և միաժամանակ ցույց տալիս նրանց վճռականությունը մինչև վերջ պայքարելու աշխատավոր մարդկության ազատագրման համար։ Աքսորյալ սոցիալ-դեմոկրատները հետու Ախիրում չեն դադարեցնում ռևոլյուցիոն աշխատանքը և անընդհատ բարձրացնում են իրենց մարքսիստական պատրաստականությունը։ Հոդվածն ավարտում է ոգեշնչող խոսքերով՝ «Այս ավյալները պերճախոս ապացույց են Ռուսաստանի բանվոր դասակարգի գաղափարական որոնումների ուժգնության, արիության և ուժեղ գրավչության նրա լուսավոր ապագայի»[1]։

Մաավյանը թերթում մեծ տեղ է հատկացրել բանվորական կյանքի պատկերմանը և ցույց տվել, որ Ռուսաստանում հասունացող ռևոլյուցիայի գլխավոր շարժիչ ուժն ու ավանգարդը պրոլետարիատն է, անհրաժեշտ է օր-ավուր բարձրացնել նրա դասակարգային ինքնագիտակցությունը, իսկ այդ գործում կարևոր դեր ունի բանվորական-բոլշևիկյան մամուլը։ «Բանվորական մամուլը Ռուսաստանում» հոդվածում Մաավյանը տալիս է բոլշևիկյան մամուլի տեսությունը և բարձր գնահատում հատկապես «Զվեզդա»-ի ու «Պրավդա»-ի դերը։ Նա գրում է, որ «Պրավդա»-ն իր գոյության առաջին իսկ օրից դարձավ գիտակից բանվորության գաղափարական ղեկավար օրգանը»։ Մաավյանը ցերմությամբ է խոսում նաև „Просвещение“, „Работница“, „Вопросы страхования“ և այլ թերթերի ու ժուռնալների մասին։

Հոդվածի վերջում նա կանգ է առնում Անդրկովկասյան բանվորական մամուլի վրա։ Խոշոր դեր էր կատարում հայ իրականության մեջ «Պայքարը», որի մասին Մաավյանը գրում է. «Իր համեստ գործն է կատարում և հայ շարքաթերթը, որ իր գոյության կարճ ժամանակամիջոցում հեղինակություն է գրավել որոշ շրջաններում և տարածվում է մեկ հազար օրինակ»[2]։

Մաավյանը, ակնարկելով դալիք ռևոլյուցիայի հոգեբանակը, համոզմունք է հայտնում, որ շուտով «կգան նոր, տանելի օրեր և Ռուսաստանի բանվոր դասակարգի հզոր կամքը կստեղծի իր հզոր մամուլը»։

* * *

Մաավյանի ժուռնալիստական հրապարակախոսական գործունեության մեջ կարևոր տեղ են բռնել գրականագիտության հարցերը։ Նա հանդես է

[1] «Պայքար», № 19, 1916, մայիսի 8։
[2] «Պայքար», № 11, 1916, մարտի 13։

ելել բազմաթիվ գրախոսականներով, որոնց մեջ անց է կացնում բոլշևիկյան պարտականության սկզբունքը և պահանջում, որ գրականությունն ու արվեստը ծառայեն ժողովրդական մասսաների ազատագրության ու բարեկեցության գործին։

Նա առաջնակարգ նշանակություն էր տալիս պրոլետարական ականավոր գրող Մ. Գորկու գեղարվեստական երկերի տարածմանը հայ իրականության մեջ։ «Պայքար»-ի էջերում հաճախ տպագրվում էին Գորկու երկերը, որոնց մի մասը թարգմանել է ինքը՝ Մռավյանը։ Նա Գորկու «Հերթականներ»-ի ուսական հրատարակության առթիվ հանդես եկավ հատուկ գրախոսականով («Պայքար», № 10, 1915, մարտի 6), որի մեջ մերկացնում էր Գորկու բուրժուական քննադատներին, բացահայտում նրանց զրպարտությունների էությունը։ Նա ցույց է տալիս, որ հոգեակավոր ուս գրող Մաքսիմ Գորկին չի կարող դուր գալ շահագործողներին, որովհետև նա պատկանում է պրոլետարիատին ու աշխատավոր մասսաներին։

Գորկու երկերը շնչում են ռևոլյուցիոն պայքարի ոգով։

Մռավյանը բացահայտում է Գորկու երկերի քաղաքական-դասակարգային մեծագույն նշանակությունը և ոգևորում դրանց թարգմանության ու ժողովրդականացման գործը։

Մռավյանը հատուկ հոգատարություն է ցուցաբերել գեպի հայ պրոլետարական գրականությունը։ Նա ամեն կերպ խրախուսել է դեմոկրատական, պրոլետարական գրողների վառ ձգտումները։ Հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հ. Հակոբյանը եղել է «Պայքար»-ի մշտական ու ակտիվ աշխատակիցը և տպագրել է իր բազմաթիվ ռևոլյուցիոն բանաստեղծությունները։ Ավելին, նա իր տամախոհների հետ միասին տպագրական բանվորների միջոցով «Նոր գրադարան» սերիայով հրատարակել է պրոլետարական գրականության մի շարք ժողովածուներ («Կարմիր մեխակները», «Բանվորի պրոմ»), որոնց առթիվ միանգամայն գրական ու խրախուսող գրախոսականով հանդես եկավ Մռավյանը (տես «Պայքար», № 3, 1915, դեկտեմբերի 20)։

Մռավյանը կոչ էր անում հայ բանվորներին ու աշխատավորներին՝ ավելի շատ ձեռք բերել նման գրականություն, որը սովորեցնում է կյանքը լավ ճանաչել և հաղթանակի հասնել ռևոլյուցիոն պայքարով։

Աշխատավորության լուսավորման ու դասակարգային ինքնագիտակցության զարգացման գործում նա կարևոր նշանակություն էր տալիս նաև թատրոնին և արվեստին։ Մռավյանը գրել է մի շարք թատերական-ռևոլյուցիոնիաներ, որոնցում մերկացնում է բուրժուական բարքերը և բարձր գնահատում իսկական ժողովրդական թատրոնի դերը՝ մասսաների քաղաքական լուսավորման գործում։

* * *

Ա. Մռավյանն իր գրական և հասարակական ողջ գործունեությամբ նպաստել է աշխատավոր մասսաների դասակարգային ինքնագիտակցության բարձրացմանը։ Նա, որպես կոմունիստական պարտիայի աննկուն զինվոր, իր ամբողջ էներգիան և ընդունակությունները ի սպաս է դրել հանուն պրոլետարիատի շահերի պաշտպանության։

Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու Լենինյան լոզունգի կենսագործման ցայտուն օրինակ հանդիսացավ 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան, որը կործանեց Ռոմանովների 300-ամյա արյունոտ կայսրությունը։

Մռավյանը ողջունեց ցարիզմի տապալումը։ Նրա խմբագրությամբ «Պայքար» թերթը հաղորդագրություններ էր տպագրում կատարված ռևոլյուցիայի մասին։ Բայց շուտով հայտնի դարձավ, որ «Պայքար»-ին մասնակցող մենշևիկները պաշտպանում են բուրժուական ժամանակավոր կառավարությունը և աջակցում նրա հակաժողովրդական քաղաքականությանը։ Այդպիսի պայմաններում բոլշևիկներն այլևս չէին կարող աշխատել մենշևիկների հետ միևնույն թերթի շրջանակներում և 1917 թ. հունիսին հրատարակեցին իրենց ինքնուրույն օրգանը «Բանվորի կոչը» անունով։ Նրա առաջին համարում տպագրվեց մի խումբ բոլշևիկների բաց նամակը, որտեղ ասված է. «Մենք հեռանում ենք, համոզված, որ Ռուսաստանի մեծ հեղափոխությունը ավելի քան երբևիցե պարտք է դնում պրոլետարական կուսակցության վրա, թոթափել իր ուսից մանր-բուրժուական և կցորդ տարրերը, որոնք դոյություն ունեին մեր կուսակցության մեջ։ Բյուրեղացած, հստակ, անխառն և անաղարտ պրոլետարական կուսակցություն և պրոլետարիատի կովին համապատասխան ծրագրային և տակտիկական բովանդակություն — ահա մեզ, հեղափոխական սոցիալ-դեմոկրատներիս հեռանալու դրդող և ստիպող պատճառները։ Մենք համոզված ենք և պնդում ենք, որ զտված, անաղարտ պրոլետարական կուսակցությունը միայն կարող է առաջնորդ հանդիսանալ Ռուսաստանի բանվորությանը»։

Մռավյանն իր հերթին հանդես եկավ հատուկ հոդվածով («Մեծամասնականները ինչու են բաժանվել», «Պայքար», № 46, 1917, հունիսի 11), որի մեջ մերկացնում էր մենշևիկներին, որպես ռևոլյուցիայի դավաճանների։ Նա նշում էր, որ պետք է բացարձակ անվստահություն հայտնել ժամանակավոր կառավարության նկատմամբ, քանի որ նա կոնտրռևոլյուցիոն, հակարանվորական ու հակաժողովրդական կառավարություն է։ Ռևոլյուցիան կատարել են բանվորներն ու գյուղացիները և նրանք էլ պետք է իրենց ձեռքը վերցնեն քաղաքական իշխանությունը։

Զինված Լենինի Ապրիլյան թեզիսներով, պարտիայի Ապրիլյան կոնֆերենցիայի և ապա 6-րդ համագումարի որոշումներով, բոլշևիկները կուրս վերցրին դեպի սոցիալիստական ռևոլյուցիա, դեպի համաժողովրդական զինված ապստամբություն, որը պետք է տապալեր կապիտալիզմը և իշխանությունը հանձներ բանվորների, գյուղացիների ու զինվորների դեպուտատների Սովետներին։

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո աննկուն բոլշևիկ Ասքանազ Մռավյանի գործունեության մեջ սկսվում է մի նոր բեղմնավոր շրջան, որը արժանի է հատուկ ուսումնասիրության։